ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի առանձին դրույթների կիրառման վերաբերյալ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի 8-րդ Հոդվածի 1-ին կետը՝ «Ներմուծման մաքսատուրքերի (այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների, որոնք ունեն համարժեք գործողություն) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» Արձանագրության 12-րդ կետին վերաբերող մասով (Պայմանագրի 5-րդ Հավելված) կիրառվում է հետևյալ խմբագրությամբ.

«12. Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվում են հետևյալ չափերով՝

Հայաստանի Հանրապետություն՝ 1,220 տոկոս,

Բելառուսի Հանրապետություն՝ 4,560 տոկոս,

Ղազախստանի Հանրապետություն՝ 7,055 տոկոս,

Ղրղզստանի Հանրապետություն՝ 1,900 տոկոս,

Ռուսաստանի Դաշնություն՝ 85,265 տոկոս:»

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից և ուժի մեջ է մտնում այն ամսվա 1-ից, որը հաջորդում է այն ամսին, որի ընթացքում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստացվել է վերջին գրավոր ծանուցումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ներպետական ընթացակարգերի կատարման մասին, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2017 թվականի ապրիլի «11»-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը հանդիսանալով սույն Արձանագրության ավանդապահը, Եվրասիական տնտեսական միության յուրաքանչյուր անդամ պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**